

բացուեք տակաւ ի զօրութենէ եւ հաճեսցուք ուր ուրեմն մտանել ի միութիւնն» :

Անշուշտ Լեհաստանի հայ թեմին ներքին եկեղեցական գոտութիւնները, ինչպէս նաեւ այն ճոխ թեմին Էջմիածնի նուիրապետութեանէն ցաւալի բաժանումը խոր խոցեցին հօտասէր հովուին սիրտը : Փութաց Մովսէս կաթողիկոս դարման մը խորհիլ յանկարծական մորրիկը փարատելու եւ խաղաղ պայմանները վերահաստատելու համար : Խորհեցաւ դիմել թղթերով Ուրբանոս Ը . Քահանայապետին եւ Վլատիսլաւ Թագաւորին , հայցելու անոնց միջնորդութիւնը ի զգաստութիւն յորդորելու համար Նիկոլ եպիսկոպոսը . իսկ հայ ժողովրդեան գրել մի թարական եւ խրատական թուղթեր ²⁴ :

Ինչպէս կը գրէ Դաւրիթեցի (381) ուղարկեց Մովսէս նոյն պատգամաւորութեան ձեռքով «զնամակս խոհական եւ լի իմաստութեամբ, խոնարհ եւ մաղթական բանիւ առ Թագաւորն Լեհաց եւ առ նորին իշխանսն, եւ առ արքեպիսկոպոսն քաղաքին Իլովայ որ յադդէն Ֆռանկաց, նաեւ առ Փափն . եւ խնդրեաց թէ ողորմեցարուք տառապեալ ժողովրդեանն եւ շնորհեցէք զեկեղեցին յինքեանս եւ մի՛ խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ» :

Առ Իննովկենտիոս Ը . Քահանայապետ

²⁴ Այս թուղթերու մասին տկնարկութիւն մ'ունի Ստեփանոս Ռոչքա . «Երարձ, կ'ըսէ, Մովսէս ի շարականէն «Ով հրաշալի նախահարք» գերիս յետին տունն ... որպէս յայտ է ի քրքոց նորա եւ առ մեր Լէօպոլսեցիս» . Կամենից, էջ 138 :